



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՎԱՐՔԱԳԾԻ (ԷԹԻԿԱՅԻ) ԿԱՆՈՆՆԵՐ

*Փոփոխված և վերահաստատված է
2016 թ. Սեպտեմբերի 28-ին*

Մենք՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդներս (այսուհետ՝ Դիտորդների խումբ)։

- ✚ Գիտակցելով մասնագիտական վարքի կանոններին հետեւելու եւ դրա շուրջ համախմբվելու անհրաժեշտությունն ու հնարավորինս բարձր աշխատանքային եւ բարոյական չափանիշներ պահպանելու դիտորդների պատասխանատվությունը,
- ✚ ընդգծելով, որ մարդու իրավունքները հիմնարար բնույթի համընդհանուր իրավունքներ են, որոնք ունի ցանկացած անհատ՝ պետության հետ իր փոխհարաբերություններում,
- ✚ մատնանշելով անկախության պաշտպանության անհրաժեշտությունը,
- ✚ ընդունելով, որ դիտորդները հաշվետու են հասարակությանը եւ միմյանց առջեւ,
- ✚ ընդունում ենք հետեւյալ սկզբունքներն ու դրանցից բխող պարտավորությունները

1. Ճշգրտություն եւ անկողմնակալություն

1.1. Մինչ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ։



1.2. Եթե Դիտորդների խումբը հասարակական նշանակալի տեղեկություններ է ստացել, սակայն, չի կարողացել ճշտել փաստերը, հրապարակելիս, անպայման, նշել այդ մասին,

1.3. Վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա, հստակ սահմանազատել փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը կարծիքներից, վերլուծություններից ու մեկնաբանություններից:

2. Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ

2.1. Նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Ջգույշ լինել դեռահաս ամբաստանյալների, ինչպես նաեւ սեռական հանցագործությունների զոհերի ինքնությունը բացահայտելիս:

2.2. Կալանավորված կամ դատապարտված անձանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ:

3. Հաշվետվողականություն հանրության հետ հարաբերություններում

3.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել Խմբի տեսակետներից:

3.2. Պարբերաբար հասարակության առջև հանդես գալ մամուլի ասուլիսներով, հայտարարություններով և այլ եղանակներով:

4. Հասարակական վերահսկողության հիմնական նպատակներն են

4.1. Քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ նաև՝ ՔԿՀ) պահվող անձանց իրավունքների պաշտպանության նկատմամբ հասարակական վերահսկողությունը, նրանց կենցաղային պայմանների բարելավումը, հասարակությանը ՔԿՀ-ների հիմնախնդիրների մասին իրազեկելը:

4.2. ՔԿՀ-ներում մարդու իրավունքների խախտման դեպքերի կանխարգելում և բացահայտում, խախտված իրավունքների վերականգնման աջակցություն:



4.3. ՔԿՀ-ներում իրավիճակի վերլուծության հիման վրա եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությանը և հասարակությանը:

4.4. ՔԿՀ-ների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության և այլ իրավական ակտերի ուսումնասիրումը, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր իրավական ակտեր նախապատրաստելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար դիտարկումների կազմակերպումն ու անցկացումը պետք է հիմնվի Դիտորդների խմբի կողմից ընդունված համընդհանուր սկզբունքների վրա, որոնց պահպանումը պարտադիր է Դիտորդների խմբի բոլոր անդամների համար:

5. Դիտորդների խմբի կողմից ՔԿՀ-ներում հասարակական վերահսկողության իրականացման հիմնական սկզբունքները

1. Անկախություն
2. Չեզոքություն
3. Արհեստավարժություն
4. Անկողմնակալություն
5. Հաշվետվողականություն
6. Հետևողականություն
7. Խտրականության բացառում
8. Գաղտնիություն
9. Մարդասիրություն
10. Հանդուրժողականություն

6. Դիտորդների խմբի գործունեության սկզբունքներն են.

6.1. Յուրաքանչյուր Դիտորդ գիտակցում է, որ մարդու իրավունքները, դրանք հիմնարար բնույթի համընդհանուր իրավունքներ են, որոնք ունի ցանկացած անհատ՝ պետության հետ իր փոխհարաբերություններում: Դիտորդը գիտակցում է մարդու



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԴՈՒՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

իրավունքների գերակայությունը իշխանական, քաղաքական և պետական շահերի նկատմամբ:

6.2. Դիտորդների խմբի յուրաքանչյուր անդամ կոչված է պաշտպանելու մարդու իրավունքները:

6.3. Դիտորդների խմբի անկախությունը, որպես խոշտանգումների և մարդու արժանապատվությունը նվաստացնող և այլ դաժան վերաբերմունքի կանխարգելման երաշխիք, ապահովվում է՝

ա. Դիտորդների խմբի անդամի մանդատի օրենսդրական ամրագրումը,

բ. անկախ փորձագետներից բաղկացած Դիտորդների խմբի ինքնավարությամբ,

գ. խմբի անդամների նշանակման անկախ գործընթացով (նրանց նշանակումը պետք է ձևակերպվի պաշտոնական ակտով և լինի թափանցիկ,

6.4. Դիտորդների խումբը, որպես անկախ ինքնակառավարվող մարմին, իր գործունեության մեջ պետք է հավատարիմ մնա չեզոք քաղաքականությանը: Դրա համար Դիտորդների խումբը, որպես կոլեգիալ մարմին պետք է ծավալի անկախ գործունեություն չհետապնդելով որևէ պետական, կուսակցական, քաղաքական և այլ շահ:

6.5. Դիտորդների խմբի յուրաքանչյուր անդամ պետք է դիմակայի իր գործունեության հանդեպ ցանկացած միջամտությանը՝ հիմնվելով այն փաստի վրա, որ ինքն անկախ է իր լիազորություններն իրականացնելիս: Դիտորդների խումբն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, Դիտորդների խմբի գործունեության Կարգով և խմբի գործունեության էթիկայի կանոններով:

6.6. Դիտորդների խմբի բոլոր անդամները պետք է օժտված լինեն անհրաժեշտ ներուժով և մասնագիտական գիտելիքներով: Խմբի կազմի մեջ հնարավորության սահմաններում պետք է ներգրավվեն իրավաբաններ, բժիշկներ, հոգեբաններ, ինչպես նաև՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ մասնագետներ:

6.7. Դիտորդների խմբի յուրաքանչյուր անդամ պետք է պատրաստված լինի Դիտորդի գործունեություն իրականացնելու համար.

ա. պետք է տիրապետի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային և ազգային իրավական փաստաթղթերին,

բ. պետք է նախօրոք ուսումնասիրի ՀՀ օրենսդրությունը, ինչպես նաև՝ իրավապահ մարմինների իրավասություններն ու գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթերը, ՔԿՀ-ների ներքին կանոնակարգը,



գ. պետք է ունենա համապատասխան աշխատանքային գործիքներ:

6.8. Անաչառությունը՝ ինչպես ՔԿՀ-ների անձնակազմի, այնպես էլ կալանավորված և դատապարտված անձանց հանդեպ, հեղինակության պահպանման պարտադիր պայման է: Անհրաժեշտ է պահպանել հարգանքը՝ անձնակազմի, ՔԿՀ-ներում պահվող անձանց և սահմանված ներքին կանոնակարգի հանդեպ:

6.9. Դիտորդների խմբի յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա ուշադիր լսել հարցազրույց անցնող անձին, քաղաքավարի, դաստիարակված և զուսպ լինի սուբյեկտիվ գնահատականներ արտահայտելիս: Հարցազրույցը ոչ մի դեպքում չպետք է փոխակերպվի հարցաքննման:

6.10. Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել բարդ դեպքերին: Հնարավորինս, հարկավոր է խուսափել կոնֆլիկտի կարգավորման կամ պրոբլեմի լուծման խոստումներից:

6.11. Հասարակական վերահսկողության, հաշվետվության կամ Դիտորդի մանդատի սահմաններում իրականացված որևէ գործունեության հրապարակումների ընթացքում Դիտորդների խմբի յուրաքանչյուր անդամ պետք է առաջնորդվի արդարության և անխտրականության սկզբունքներով՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

6.12. Կարևոր է կարողանալ վերահսկել սեփական հույզերը, զգացմունքները սարսափելի վատ պայմաններում պահվող կամ առանձնապես հուսահատ կալանավորված կամ դատապարտված անձանց մոտ, որոնք դարձել են հսկիչների, վարչական անձնակազմի ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի զոհը:

6.13. Թափանցիկությունն ապահովվում է հասարակությանը՝ Դիտորդների խմբի աշխատանքների և գործունեության մասին հաշվետվություն ներկայացնելու միջոցով: Անհրաժեշտ է նաև հասարակությանը պարբերաբար տեղեկացնել ՔԿՀ-ներում տիրող ընդհանուր վիճակի և հասարակական վերահսկողության արդյունքների մասին:

6.14. Անհրաժեշտ է համագործակցել և խորհրդակցել քաղաքացիական հասարակության տարբեր ինստիտուտների ներկայացուցիչների հետ, քանի որ վերջիններս հանդիսանում են արժեքավոր տեղեկատվության աղբյուր:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԾԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

6.15. Անհրաժեշտ է նաև՝ կառուցողական հարաբերություններ հաստատել ազատագրկման վայրերի վերահսկողությամբ զբաղվող այլևայլ կազմակերպությունների և կառույցների հետ՝ որպեսզի ուժեղացվեն և փոխարացվեն կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների խախտումները կանխելուն ուղղված ջանքերը:

6.16. Նախքան ՔԿՀ-ների այցելություն կատարելը, անհրաժեշտ է հստակ սահմանել այցելության նպատակը և անհրաժեշտության դեպքում նախապատրաստել համապատասխան գործիքները: Այցելությունները, կախված դրանց նպատակից, կարող են լինել ինչպես պլանային, այնպես էլ ոչ պլանային:

6.17. Դիտորդների խմբի անդամները իրենց գործողություններում պետք է լինեն ճշտապահ և հետևողական: Նրանք իրավունք չունեն դուրս գալ իրենց մանդատի սահմաններից, այսինքն՝ վերահսկողությունը պետք է իրականանա դիտարկման նախագծված պլանին և դրանում շարադրված նպատակներին համապատասխան:

6.18. Անհրաժեշտ է գործուն կերպով համագործակցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, քրեակատարողական վարչության, քրեակատարողական հիմնարկների աշխատակազմերի հետ և ձգտել նրանց հետ մշտապես համապատասխան երկխոսություն հաստատել՝ Դիտորդների խմբի առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման համար:

6.19. Դիտարկման ավարտից հետո ՔԿՀ-ի պետի կամ անձնակազմից որևէ մեկի հետ զրույցում պետք է զգույշ լինել այցելության վերջնական եզրակացությունները ձևակերպելիս:

6.20. Դիտորդների խմբի յուրաքանչյուր անդամ պարտավոր է հարգել անձնական կյանքի գաղտնիության իրավունքը: Դիտորդը չպետք է վտանգի ենթարկի տեղեկատվություն տրամադրող անհատին՝ լինի կալանավոր կամ դատապարտյալ, թե ՔԿՀ-ի աշխատակից, այսինքն, պետք է աշխատի՝ <Մի վնասիր> սկզբունքով:

6.21. Գրառումները կամ հարցումը պետք է լինեն անանուն, և դիտարկման արդյունքում ստացված անձնական բնույթի տվյալները կարող են հրապարակվել միայն տեղեկատվություն տրամադրած անձի համաձայնությամբ:

6.22. Դիտարկման արդյունքները ներկայացվում են պլանային կամ արտապլանային հաշվետվությունների և զեկույցների տեսքով: Հաշվետվությունը պետք է ներառի իրավիճակի ընդհանուր նկարագրություն, խախտումների փաստեր, եզրակացություններ և հնարավորության դեպքում՝ հանձնարարականներ և առաջարկություններ:



6.23. Հաշվետվությունում ներառված փաստերը պետք է հիմնավորված և ստուգված լինեն: Ավելի լավ է լռել այն իրավիճակի մասին, որը չունի բավարար ապացույցներ, քան հաշվետվության մեջ ներառել չստուգված և ոչ հավաստի տեղեկատվություն:

6.24. Կատարած ուսումնասիրությունների արդյունքում ներկայացվում է հաշվետվություն ՀՀ Արդարադատության նախարարություն:

Հասարակական դիտորդների խմբի անդամի իրավունքներն ու պարտականությունները

7. Խմբի անդամի իրավունքները

Խմբի անդամն իրավունք ունի՝

7.1 Ծանոթանալ Խմբի գործունեության հետ կապված բոլոր փաստաթղթերին, այդ թվում նաև՝

ա. Խմբի ժողովների արձանագրություններին,

բ. այցելությունների արդյունքում կազմված հաշվետվություններին,

գ. Խմբի կողմից ընդունված որոշումներին,

դ. Խմբի կողմից կազմված դիմումներին և հարցումներին, ինչպես նաև դրանց պատասխաններին,

ե. Խմբի կողմից նախապատրաստվող ծրագրերին,

զ. ֆինանսական հաշվետվություններին և այլն:

7.2. Տեղյակ լինել Խմբի յուրաքանչյուր անդամի՝ այլ մարմինների հետ հանդիպումների, ինչպես նաև՝ դրանց արդյունքների մասին, եթե դա կապված է Խմբի գործունեության հետ:

7.3. Իրականացնել այցելություններ հետևյալ դեպքերում՝

ա. պլանային,

բ. արտապլանային (ծրագրով նախատեսված),

գ. ստացված ահազանգերի հիման վրա, որը պետք է մանրամասն նկարագրվի և հիմնավորվի հաշվետվությամբ: Կատարված այցելության մասին տեղեկացվում է Խմբի նախագահը և քարտուղարությունը: Այցելության վերաբերյալ կազմվում է հաշվետվություն, որը լրացվում է Խմբի օնլայն շտեմարանի ձևանմուշում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային փոստով ուղարկվում է Խմբի նախագահին և քարտուղարությանը:

7.4. Իրավունք ունի հանդես գալ Խմբի գործունեությանը առնչվող, ինչպես նաև Խմբի գործունեությունը բարելավող առաջարկություններով:



7.5. Հրավիրել արտահերթ ժողովներ՝ նախապես տեղյակ պահելով դրա օրակարգի մասին:

7.6. Խմբի ցանկացած անդամ Խմբի կողմից հավանության արժանանալուց հետո, կարող է իրականացնել ֆինանսական միջոցների հայթայթում, ներկայացնել դրամաշնորհային ծրագիր, Խմբի աշխատանքներին օժանդակելու նպատակով: Իրականացված ծրագրի վերաբերյալ Դիտորդների խմբին տվյալ անդամի կողմից ներկայացվում է հաշվետվություն:

8. Խմբի անդամի պարտականությունները

Խմբի անդամը պարտավոր է՝

8.1. Ներկա գտնվել Խմբի ամենամսյա հրավիրվող բոլոր նիստերին:

8.2. Նիստերին 3 անհարգելի բացակայության դեպքում տվյալ անդամի լիազորությունների դադարեցման հարցը դրվում է քվեարկության:

8.3. Կատարել Խմբի կողմից ընդունված որոշումները:

8.4. Իր գործունեությամբ նպաստել Խմբի հեղինակության բարձրացմանը:

8.5. Խմբի անունից հանդես գալուց առաջ կատարվելիք գործողությունները նախապես համաձայնեցնել Խմբի հետ:

8.6. Չօգտագործել Խմբի անդամությունը անձնական շահերի համար:

8.7. Լինել անաչառ, այն է՝ հարգալից վերաբերմունք ցուցաբերել խմբի անդամների, ՔԿՀ-ների աշխատակիցների, ինչպես նաև՝ ՔԿՀ-ներում պահվող անձանց նկատմամբ:

8.8. Տարեկան պլանային և ոչ պլանային այցելություններից 12-ին չմասնակցելու և այցելությունների հաշվետվությունները չներկայացնելու դեպքում տվյալ անդամի լիազորությունների դադարեցման հարցը դրվում է քվեարկության:

8.9. Կատարված այցելության մասին կազմել հաշվետվություն և 3 օրվա ընթացքում լրացնել խմբի օնլայն շտեմարանի ձևանմուշում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային փոստով ուղարկել Խմբի նախագահին և քարտուղարությանը:

8.10. Տեղյակ պահել Խմբի քարտուղարությանը կամ նախագահին կատարվելիք այցելության՝ ժամանակի, վայրի, ինչպես նաև այցելությունն իրականացնող խմբի անդամների կազմի մասին:



8.11. Ապահովել գաղտնիություն, այն է՝ չվտանգել տեղեկատվություն տրամադրող անհատին, լինի դա ՔԿՀ-ի աշխատակազմի ներկայացուցիչ, թե ՔԿՀ-ում պահվող ազատազրկված անձ:

8.12. Պարտավորությունները չկատարելու դեպքում, Խմբի անդամը կարող է հեռացվել խմբից՝ Խմբի անդամների 2/3 ձայների մեծամասնությամբ, քվեարկության միջոցով:

8.13. ՀՀ ԱՆ ՔԿՀ-ի աշխատակիցների հետ հանդիպումներին կարող են մասնակցել միայն Խմբի կողմից լիազորված անձինք, առնվազն Խմբի երկու անդամի կազմով:

8.14 Տեղեկացնել էլ-փոստային և/կամ այլ միջոցներով Խմբի մյուս անդամներին՝ Խմբի անունից այլ մարմինների և անձանց հետ հանդիպումների, ինչպես նաև դրանց արդյունքների մասին եռօրյա ժամկետում:

9. Հասարակական Դիտորդների խմբի անդամության հիմնական պահանջները և ընդունման կարգը

9.1. Հասարակական Դիտորդների խմբի անդամության հավակնորդը ներկայացնում է դիմում Խմբի նախագահի անունով: Սույն դիմումին կցվում են հավակնորդի անձնագրի պատճենը, ինքնակենսագրությունը, իրեն ներկայացնող կազմակերպության երաշխավորագիրը, կազմակերպության կանոնադրության պատճենը և երկուական լուսանկար (3/4):

9.2. Հասարակական Դիտորդների խմբի կողմից խրախուսվում է այն կազմակերպություններին և անհատներին, որոնք գործում են ՀՀ մարզերում և վերջին մեկ տարվա ընթացքում իրենց գործունեությամբ առնչվում են ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում հասարակական Դիտորդների խմբի գործունեության Կարգի 1-ին գլխով սահմանված նպատակների իրականացմանը, այն է՝

ա. ՔԿՀ-ներում պահվող անձանց իրավունքների պաշտպանության նկատմամբ հասարակական վերահսկողությունը, նրանց կենցաղային պայմանների բարելավումը, հասարակությանը ՔԿՀ-ների հիմնախնդիրների մասին իրազեկելը,

բ. ՔԿՀ-ներում մարդու իրավունքների խախտման դեպքերի կանխարգելումը և բացահայտումը,

գ. ՔԿՀ-ներում իրավիճակի վերլուծության հիման վրա եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությանը և հասարակությանը,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

դ. ՔԿՀ-ների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության և այլ իրավական ակտերի ուսումնասիրումը, անհրաժեշտության դեպքում՝ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր իրավական ակտեր նախապատրաստելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

9.3. Խումբը բաղկացած է ոչ պակաս, քան յոթ և ոչ ավել, քան քսանմեկ հոգուց: Ընդ որում, յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն Խմբում կարող է ունենալ մեկ անդամ:

9.4. Խմբի կազմում նոր անդամի ընդգրկման մասին որոշումն ընդունվում է Խմբի անդամների 2/3-ի համաձայնությամբ, որից հետո ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանը:

9.5. Խմբի անդամ կարող է լինել 18 տարին լրացած, հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

9.6. Նախապատվությունը տրվում է իրավաբանի, մանկավարժի, բժշկի, հոգեբանի մասնագիտություն ունեցող անձանց:

9.7. Խմբի անդամը պետք է դրսևորի իրեն որպես բարձր բարոյականություն ունեցող անձնավորություն:

9.8. Խմբի անդամ չի կարող լինել այն անձը, ով՝

ա. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ. դատապարտվել է հանցագործություն կատարելու համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

գ. տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը,

դ. հանդիսանում է պետական ծառայող: